



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբեր 2018 թվականի թիվ 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՔԻ, ԳՈՇԻ, ՆԱՎՈՒՐԻ ԵՎ ՊՏՂԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաններին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսվել է 1775,1 հազար դրամ գումար:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հովքի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը դպրոցահասակ երեխաների և ուսուցիչների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար տրամադրել ամսական մեկ հարյուր վաթսուներեք հազար (160000) դրամ գումար:
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գոշի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար տրամադրել ամսական տասներեք հազար (13000) դրամ գումար:
3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նավուրի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար տրամադրել ամսական տասներեք հազար (13000) դրամ գումար:
4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Պտղավանի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար տրամադրել ամսական տասներեք հազար (11000) դրամ գումար:
5. 2018 թվականի հոկտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Տավուշի մարզպետի 2018 թվականի փետրվարի 1-ի թիվ 16-Ա որոշումը»:

Վ. Ղալումյան
9/26/2018



X *[Handwritten signature]*